# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Շիրակամուտ

N— Ե -03/161

«13» 12 2017թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ներկայացնում ենք Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 54-Ա և 55-Ա որոշումները :

Առդիր 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա. Երանոսյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«11» դեկտեմբերի 2017 թվականի N54 - Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՂՈՑԻ թիվ 2/2 ՀԱՍՑԵԻ
ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի գլխավոր հատակագիծը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ի մասի 1-ի կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածի 11.12.13.14 մասերով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա/ ենթակետով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1. Փոխել Շիրակամուտ համայնքի Հայկական փողոցի թիվ 2/2 հասցեում բնակավայրերի այլ հողերից 683.2քմ (0,06832հա) մակերեսով հողի գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի փոստային հասցեն՝ գ. Շիրակամուտ Հայկական փողոց, թիվ 2/2:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա. Երանոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

## Ո Ր Ո Շ Ու Մ

«11» դեկտեմբերի 2017 թվականի N55 - Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9-ի ԹԻՎ 39-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Շիրակամուտ համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 28.11.2017 06-0019 վկայականը, Շիրակամուտ համայնքի ղեկավարի 2017թ. հոկտեմբերի 09-ի թիվ 39-Ա որոշումը, «ՄԵԼ և ՄԻԼ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից 05.12.2017թ. տրված հողամասերի հատակագծերը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Շիրակամուտ համայնքի ղեկավարի 2017թ. հոկտեմբերի 09-ի «ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի թիվ 4 փողոցի թիվ 7 հասցեում Շիրակամուտ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասը որպես երկու առանձին գույքային միավորներ տարանջատելու և փոստային հասցեներ տրամադրելու մասին» թիվ 39-Ա որոշման 2-րդ կետի բ) ենթակետում «679.8քմ» թիվը փոխարինել «880,8քմ» թվով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա., Երանոսյան